655
4-21

655
4-21

98

ԳԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ

ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7171 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ն. Ազանեանի, Պօլից. 7
1915

24 .05. 2013

ՄԱՅՈՒՐ ԳԻՐՔ

ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀԱՅԱՍՏԱՆԱՅՑ ՑՈՑԱՅ

ՄԱՅՐԱՊՈՂԱՄԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՄԱՐԻՆ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ Ա.Գ.Հ.Ա.
ՄՈՍԿՎԱ, ՄԱՇՏՈՑԻ ՄԱՏԵՆԱՏՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԶՈՒՅՔՎԵՎ
Տպարան Մ. Մարգարեանի, Փոստ. 7
1913

24 SEP 2007
655
4-21
300
13561-44
1003
11893

Թիֆլիսի Նահանգական՝ ընկերութիւնների վերաբերեալ Ատենի՝ օրագրական որոշմամբ 1914 թուի Մայիսի 10-ին «Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը» մուծուած է մատեան 134 համարի տակ, հաստատուած է և այս փոփոխած կանոնադրութեան հիման վրայ յիշեալ Ընկերութեան գործունէութեանը ոչ մի արգելք չկայ։

Նահանգապետի պաշտօնակատար՝

Ա. ՉԵՐՆԵՎՍԿԻ

1914 թ. յունիսի 13.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆՊԱՏԱԿԸ

§ 1. Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը հիմնւում է Թիֆլիզում՝ լուսաւորութիւն տարածելու նպատակով։ Այդ նպատակը իրագործելու համար ընկերութեանը, համապատասխան դէպքերում պատշաճաւոր թոյլատրութեամբ և այս առարկային վերաբերեալ գործող օրէնքների և պետական առանձին կարգադրութիւնների պահպանութեամբ, թոյլ է տրւում.

ա) Հրատարակել հայերէն լեզուով ինքնուրոյն և թարգմանական ամեն տեսակ գրքեր,

23.837

քարտէզներ, պատկերներ և տպագրական ուրիշ գործեր. բ) տարածել թէ սեփական և թէ ուրիշների հրատարակութիւնները, բանալով Թիֆլիզում և Կովկասի ուրիշ վայրերում գրքերի պահեստներ և գրախանութներ, նոյնպէս և շրջիկ գրավաճառների օգնութեամբ և այլ միջոցներով։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

§ 2. Ընկերութիւնը իրաւունք ունի անշարժ գոյք ձեռք բերելու և առհասարակ օժտուած է իրաւական անձի բոլոր արտօնութիւններով։

§ 3. Ընկերութիւնը իրաւունք ունի մրցանակներ նշանակել հայերէն լաւագոյն գրուածքների համար։

§ 4. Ընկերութիւնը իրաւունք ունի, պատշաճաւոր թոյլտուութեամբ, հրատարակել նաև պարբերական հրատարակութիւններ։

§ 5. Ընկերութիւնը ունի կնիք «Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն» մակագրով։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 6. Ընկերութիւնը կազմուած է՝ ա) պատուաւոր, բ) մշտական, գ) իսկական և դ) աշխատակից անդամներից։ Անդամ կարող են լինել երկու սեռի անձինք։ Անդամների թիւը սահմանափակուած չէ։

Մանօր. Ընկերութեան անդամ լինել չեն կարող՝ ա) անչափահասները, բ) իսկական ծառայութեան մէջ գտնուած զինուորներն ու իջնակերները, գ) աշակերտները և դ) դատարանով իրաւունքից զրկուածները։

§ 7. Պատուաւոր անդամ ընտրւում են Ընկերութեանը առանձին ծառայութիւն մատուցած կամ Հայոց գրականութեան և Հայոց հրատարակչական գործի մէջ իրենց գործունէութեամբ յայտնի անձինք։

§ 8. Մշտական անդամ կարող են լինել Ընկերութեան օգտին միանուագ առնուազն 75 ռուբ. վճարողները։

§ 9. Իսկական անդամ կարող են լինել տարեկան երեք ռուբլի վճարողները։

§ 10. Աշխատակից անդամ ընտրւում են մէկ տարով այնպիսի անձինք, որոնք իրենց աշխատանքով և գիտութեամբ կարող են նպաստել Ընկերութեան նպատակներին։

§ 11. Պատուաւոր անդամներին ընտրում է ընդհանուր ժողովը գաղտնի քուէարկութեամբ, Խորհրդի կամ Ընկերութեան Թիֆլիզում բնակուող

անդամների 1/10 մասի առաջարկութեամբ։ Իսկ մնացեալ անդամներին ընդունում է Խորհուրդը Ընկերութեան որևէ անդամի առաջարկութեամբ։ Բոլոր տեսակի անդամները հաւասար իրաւունքներ ունեն։

§ 12. Պատուաւոր և աշխատակից անդամների համար պարտաւորեցուցիչ չէ անդամավճար տալը։ Այն իսկական անդամները, որոնք առաջին կիսամեակում չեն վճարել անդամավճարը, հեռացած են համարւում Ընկերութիւնից մինչև անդամավճար տալը։ Ընդհանուր ժողովին իսկական անդամներից կարող են մասնակցել նրանք, որոնք վճարել են անդամավճարը։

§ 13. Ընկերութեան բոլոր անդամները իրաւունք ունեն ամեն տարի ստանալ 4 ռուբ. արժողութեամբ Ընկերութեան հրատարակութիւններից։

Ծանօթ. Երեք տարուայ ընթացքում վերոյիշալ իրաւունքից չօգտուող անդամները զրկւում են իրենց հասանելիք գրքերը ստանալու իրաւունքից։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 14. Ընկերութեան միջոցները բաղկացած են՝

ա) անդամավճարներից.

բ) § 1-ի մէջ յիշուած Ընկերութեան նպատակների իրագործումից ստացուած գումարներից.

գ) դրամագլխի տոկոսներից և Ընկերութեան պատկանած անշարժ ու շարժական գոյքերի եկամուտներից.

դ) նուիրաբերութիւններից.

ե) յօգուտ Ընկերութեան՝ ամեն մի առանձին դէպքում պատշաճաւոր թոյլտուութեամբ կարգացուած դասախօսութիւնների, տուած համերգների, ներկայացումների, երեկոյթների, զբօսանքների և ամեն տեսակ ուրիշ զուարճութիւնների արդիւնքից։

§ 15. Ընկերութեան գումարներն են՝

ա) ընթացիկ,

բ) պահեստի և

գ) յատուկ։

§ 16. Ընկերութեան այս կամ այն նպատակի իրագործման համար նուիրուած յատուկ գումարի գործադրութիւնը կարող է փոխուել միմիայն նուիրաբերողի հաւանութեամբ. իսկ կտակած գումարների նպատակը մնում է անփոփոխ։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՆԸ

§ 17. Ընկերութեան գործերը վարում են Թիֆլիզում գործող՝ 1. Ընդհանուր ժողովը, 2.

ա) Խորհուրդը և բ) Վերաստուգիչ Յանձնաժողովը։

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

§ 18. Իւրաքանչիւր տարի, փետրուար ամսից ոչ ուշ, Խորհուրդը հրաւիրում է Թիֆլիզում հերթական Ընդհանուր ժողով, որի զբաղման առարկաներն են՝ ա) Ընկերութեան նախընթաց տարուայ գործունէութեան և դրամական դրութեան ընդհանուր հաշուի, նոյնպէս և առաջիկայ տարուայ նախահաշուի հաստատութիւնը, բ) պաշտօնավար անձանց ընտրութիւնը, գ) պատուաւոր անդամների ընտրութիւնը, և դ) Խորհրդի և Ընկերութեան առանձին անդամների առաջարկների քննութիւնը։

§ 19. Արտակարգ Ընդհանուր Ժողովներ գումարուում են՝ ա) Խորհրդի հայեցողութեամբ, բ) Վերաստուգիչ Յանձնաժողովի պահանջով և գ) Ընկերութեան 20 անդամների՝ Խորհրդին տուած գրաւոր յայտարարութեամբ։

§ 20. Ընդհանուր ժողովներ հրաւիրուում են յայտարարութիւններով տեղական լրագիրներում, նիստից առնուազն մէկ շաբաթ առաջ։

§ 21. Ընդհանուր ժողովը կայացած է համարուում, եթէ ներկայ է Թիֆլիզում եղած անդամների $^1/_4$ մասը, բացի այն դէպքերից, երբ

քննուում է կանոնադրութեան փոփոխութեան և Ընկերութեան գործունէութիւնը դադարեցնելու խնդիրը, որպէսզի գործերը վճռելու համար անհրաժեշտ է առաջին նիստում Թիֆլիզ եղած անդամների $^2/_3$ մասի ներկայութիւնը։ Իսկ եթէ այդքան անդամներ ներկայ չլինելու պատճառով՝ Ընդհանուր ժողովը չի կայանում, միևնոյն խնդիրների քննութեան համար երկրորդ Ընդհանուր ժողով է հրաւիրուում, որը կանոնաւոր է համարուում, քանի անդամ էլ որ ներկայ գտնուեն։

§ 22. Ընդհանուր ժողովը բացուում է Խորհրդի նախագահի ձեռքով և այնուհետև ընտրում է իր համար նախագահ և քարտուղար, բայց ոչ Ընկերութեան պաշտօնավար անձերից։

§ 23. Ընդհանուր ժողովում խնդիրները վճռուում են ձայների պարզ առաւելութեամբ, բացի միայն պատուաւոր անդամ ընտրելու, պահեստի գումարը ծախսելու, անշարժ կալուածք գնելու և ծախելու, Ընկերութեան կանոնադրութիւնը փոփոխելու և գործունէութիւնը դադարեցնելու հարցերից, որոնց վճռելու համար պահանջւում է ձայների $^2/_3$ առաւելութիւնը։ Ձայների հաւասարութեան դէպքում նախագահի ձայնը առաւելութիւն է տալիս։

Ծանօթ. Ընդհանուր ժողովների քննութեանը թոյլատրուում են այնպիսի

խնդիրներ, որոնք անմիջական կապ ունեն Կանոնադրութեան որոշած գործունէութեան հետ և որոնց մասին վաղօրօք ծանուցուած է Ընկերութեան անդամներին։

2. ՊԱՇՏՕՆԱՎԱՐ ԱՆՁԻՆՔ

Ընդհանուր կանոններ

§ 24. Խորհրդի ու Յանձնաժողովի անդամները և նրանց փոխ-անդամներն ընտրւում են Ընդհանուր ժողովում գաղտնի քուէարկութեամբ ձայների պարզ առաւելութեամբ (կէսից աւելի) երեք տարով, բացի Վերաստուգիչ Յանձաժողովի անդամներից և փոխ-անդամներից, որոնք ընտրւում են մէկ տարով Խորհրդի կազմից։ Ամեն տարի դուրս է գնում անդամների և փոխ-անդամների ⅓՝ սկզբում վիճակով, իսկ յետոյ ընտրութեան ժամանակի համեմատ։ Դուրս գնացողները կարող են կրկին ընտրուել։

§ 25 Խորհրդի անդամների թուի համեմատ ընտրւում է ամեն երկու պաշտօնավարին մի-մի փոխ-անդամ, որ փոխարինում է պաշտօնավար անձին մինչև առաջի Ընդհանուր Ժողովը՝ նրա մահուան, պաշտօնից հրաժարուելու, տեւական հիւանդութեան կամ քաղաքից բացակայելու դէպքում։

§ 26. Բոլոր ընտրովի պաշտօնները կատարւում են ձրի, բայց եթէ Ընկերութեան գործունէութիւնն ընդարձակուի, Ընդհանուր ժողովին է թողնւում այս կամ այն պաշտօնավար անձին առանձին վարձատրութիւն նշանակել, բայց միմիայն՝ ընտրութիւնները կատարելուց առաջ։

§ 27. Խորհրդի և Յանձնաժողովի նիստերը համարւում են օրինաւոր, երբ երկայ են անդամների կէսից աւելին։

Ա. ԽՈՐՀՈՒՐԴ

§ 28. Խորհուրդը գտնւում է Թիֆլիզում և կազմուած է 13 անդամից, որոնք իրենց միջից ընտրում են Նախագահ, փոխ-նախագահ, քարտուղար, գանձապահ և գրապահ։

§ 29. Խորհուրդը վարում է Ընկերութեան տնտեսական մասը, պահում է դրամական հաշիւները, կազմակերպում է գրքերի վաճառքը, Ընդհանուր ժողովին ներկայացնելու համար պատրաստում է տարեկան ընդհանուր հաշիւ Ընկերութեան նախընթաց տարուայ գործունէութեան մասին և առաջիկայ տարուայ ծախքի նախահաշիւը և գործունէութեան ծրագիրը, ընդունում է մշտական և իսկական անդամներ և ընտրում է գործակից անդամներ, քննում է առանձին անդամների առաջարկներն ու հարցապնդումները և

20 անդամի կամ Վերաստուգիչ Յանձնաժողովի գրաւոր պահանջմամբ մի ամսից ոչ ուշ, այդ առաջարկները ներկայացնում է Ընդհանուր Ժողովի քննութեանը իր եզրակացութեան հետ միասին, նշանակում և արձակում է Ընկերութեան հաստատութիւնների մէջ վարձով ծառայողներին և ոռճիկ է նշանակում նրանց, յարաբերութիւն է պահպանում Ընկերութեան ճիւղերի հետ, ղեկավարում և միացնում է Ընկերութեան գործունէութիւնը, Ընկերութեան անունից յարաբերութեան մէջ է մտնում հաստատութիւնների և անձանց հետ, պաշտպանում է Ընկերութեան շահերը, իրրև իրաւական անձն դատարանի առաջ և առհասարակ ուր որ հարկն է։

§ 30. Խորհուրդը ընտրում և հրատարակում է գրքերը, որոշում է հեղինակներին կամ թարգմանիչներին տալիք վարձատրութեան չափը սահմանուած սակագնով, յայտարարում է մրցանակաբաշխութեան նիւթեր և մրցանակներ է նշանակում ներկայացրած լաւագոյն աշխատութիւնների համար։

Ա. Մանիսր. Մրցանակաբաշխութեան համար Խորհուրդը կարող է հրաւիրել յատուկ ժիւրի Խորհրդի ներկայացուցիչներից և կողմնակի մասնագէտ-անձերից կազմուած։

Բ. Մանիսր. Պէտք եղած դէպքերում Խորհուրդը կարող է հրաւիրել դրսից ձեռնտաս անձինք տպագրուելիք գրքերի քննութեան և զեկուցման համար։

§ 31. Խորհրդի նախագահը հսկում է սոյն կանոնադրութեան և Ընդհանուր Ժողովի որոշումների ճիշտ կատարման, հրաւիրում է Ընդհանուր ժողովներ և Խորհրդի նիստեր։ Նրա բացակայութեան ժամանակ նրա պարտականութիւնները կատարում է փոխ-նախագահը։

§ 32. Քարտուղարը վարում է Ընկերութեան գրագրութիւնը՝ կազմում է Ընկերութեան արձանագրութիւնները, պահում է այբբենական կարգով Ընկերութեան անդամների անուանական ցուցակը, տոմսագրում է Ընկերութեան պաշտօնական թղթերը և կազմում է Ընկերութեան գործունէութեան տարեկան հաշիւը։

§ 33. Դանձապետը ընդունում է Ընկերութեան մէջ մտնող գրամական վճարները և գրամական նուէրները, կատարում է նախագահի կարգադրութեամբ՝ համաձայն Խորհրդի կամ Ընդհանուր ժողովների որոշումների, բոլոր գրամական գործողութիւնները և վճարումները գրամով, պահում է ժապաւինեալ ելից և մտից մա-

տեսանները և կազմում է Ընկերութեան գումարների տարեկան հաշիւը։

§ 34. Ընթացիկ ծախսերի համար գանձապետը կարող է իր մօտ ունենալ մինչև հարիւր ռուբլի, իսկ Ընկերութեան մնացած գումարները պահւում են տեղական դրամատներից մէկում ըստ Խորհրդի որոշման։

§ 35. Գրապահն ընդունում և տալիս է Ընկերութեան գրքերը և վարում է պահեստի հաշիւը։

Բ. ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

§ 36. Վերաստուգիչ Յանձնաժողովն ընտրւում է մէկ տարով առնուազն երեք անդամից և իր միջից ընտրում է նախագահ և քարտուղար։

§ 37. Վերաստուգիչ Յանձնաժողովն իրաւունք ունի իրապէս քննելու Խորհրդի դրամական և պահեստի հաշիւները, ստուգում է Խորհրդի նախընթաց տարուայ հաշիւը, նախքան Ընդհանուր Ժողովին ներկայացնելը, և այս հաշուի մասին իր նկատողութիւնները տանում է Ընդհանուր Ժողովին, նախապէս ներկայացնելով Խորհրդին։

ՏԵՂԱԿԱՆ ՃԻՒՂԵՐ

§ 38. Ընկերութեան տեղական ճիւղերը բացւում են Կովկասի զանազան վայրերում, Ընկերութեան նոյն տեղը գտնուող տասն անդամների գրաւոր յայտարարութեամբ, Խորհրդի հաստատութեամբ և ընկերութիւնների և ժողովների մասին 1906 թուի մարտի 4-ի օրէնքի 32 յօդուածի պահպանութեամբ։

§ 39. Ընկերութեան ճիւղերը՝ ա) բացւում են իրենց վայրերում, համապատասխան դէպքերում պատշաճաւոր թոյլտուութեամբ և այս առարկային վերաբերեալ գործող օրէնքների և պետական առանձին կարգադրութիւնների պահպանութեամբ, գրքերի պահեստներ և վաճառանոցներ և կազմակերպում են գրավաճառութիւնը շրջիկների և այլ միջոցներով, ինչպէս անկախ կերպով, նոյնպէս և Կենդրոնական Ընկերութեան Խորհրդի աջակցութեամբ. բ) հաղորդում են Խորհրդին իրենց կարծիքները Ընկերութեան հրատարակութիւնների մասին, գ) հրատարակում են իրենց առաջարկած և Կենդրոնական Խորհրդի հաւանութիւնն ստացած գրքերը և դ) նպաստում են Ընկերութեան միջոցների շատանալուն՝ նոր անդամներ գտնելով, կազմելով իրենց վայրերում, ամեն առանձին դէպքում պատշաճաւոր թոյլտուութեամբ, դասախօսութիւններ, երեկոյթներ և ամեն տեսակ զուարճութիւններ համաձայն Կանոնադրութեանս § 14։

§ 40. Տեղական ճիւղերը բոլոր անդամա-

վճարները յանձնում են կենդրոնական գանձարանին, իսկ մնացած եկամուտները գործադրում են համաձայն տեղական ընդհանուր ժողովներից հաւանութիւն գտած և Խորհրդի միջոցով կենդրոնական Ընդհանուր Ժողովի կողմից հաստատուած նախահաշիւների։

§ 41. Կենդրոնական Ընկերութիւնը և նրա ճիւղերը կարող են փոխադարձաբար օգնել իրար նիւթապէս և այլ կերպ։

§ 42. Ճիւղերը ունեն իրենց Ընդհանուր ժողովները, որոնք ընտրում են տեղական Խորհուրդ առնուազն երեք անդամից և նոյն թուով փոխ-անդամներից, ինչպէս և Վերաստուգիչ Յանձնաժողով։ Խորհուրդը իր միջից ընտրում է նախագահ, գանձապահ, քարտուղար և գրապահ։ Խորհրդի նախագահը կարող է մասնակցել Կենդրոնական Խորհրդի նիստերին իր ճիւղին վերաբերեալ հարցերում ձայնի իրաւունքով։

§ 43. Խորհուրդը կառավարում է տեղական ճիւղի բոլոր գործերը՝ գործելով համաձայն սոյն Կանոնադրութեան § 28—35, առաջարկում է տեղական Ընդհանուր Ժողովի հաւանութեանը նախընթաց տարուայ հաշիւը և առաջիկայ տարուայ նախահաշիւը և նրա հաւանութիւնն առնելով՝ ներկայացնում է Խորհրդի միջոցով Կենդրոնական Ընդհանուր Ժողովի հաստատութեանը։ Վերաստուգիչ Յանձնաժողովը գործում է սոյն Կանոնադրութեան § 36—37 համաձայն։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՓԱԿՈՒՄԸ

§ 44. Սոյն Կանոնադրութեան մէջ որևէ փոփոխութիւն, որ կատարուած է § 21 և 23 համաձայն, ներկայացւում է մատեան մուծելու սահմանուած օրինական կարգով։

§ 45. Ընկերութեան գործունէութեան դադարման դէպքում, արտակարգ Ընդհանուր ժողով է հրաւիրւում, որը և որոշում է Ընկերութեան պատկանեալ գոյքը՝ ամբողջովին կամ մաս-մաս, այս կամ այն հաստատութիւններին յանձնելու։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI. 1922
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Именна, Мясникяна

տասարկել Ցանցառաբերել տարեւ է սակ վաստ-
ատարկել § 36—37 տեսակարկ։

ԳԻՒՂԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՒՂԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԱՐՈՒՄԸ

§ 44. Սակ տասարկելիներ սկզ սակ-
վարելիներ, որ բաղադրված է § 21 և 23 տա-
վարելիներ, սակ տասարկելիներ է տասարկ տա-
տասարկ օրինակ տարբերակ։

§ 45. Գիտելիքներ գիտելիքներ գիտելիքներ-
տասարկ։ Գիտելիքներ գիտելիքներ գիտելիքներ է
տասարկ գիտելիքներ տասարկ։ Գիտելիքներ գիտելիքներ
գիտելիքներ։ սակ և սակ է գիտելիքներ գիտելիքներ
տասարկ։ սակ տասարկ գիտելիքներ գիտելիքներ տասարկ
սակ տասարկ գիտելիքներ գիտելիքներ գիտելիքներ-
տասարկ սակ տասարկ գիտելիքներ գիտելիքներ գիտելիքներ-
տասարկ։

Հ. Ս. Ս. Ս

ՀՀ Ազգային գրադարան
NL0290222

23.831